Արձանագրություն N 2

<<ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/41>> ծածկագրով ՀՀ Արարատի մարզի Մասիսի թիվ 5 ավագ դպրոցի կաթսայատան վերակառուցման (վերազինման) աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 14.11.2019թ.
ժամը 12:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Գ. Գևորգյան
Ռ. Ադամյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/41 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման գործընթացն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

բ) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 11.11.2019թ., ժամը 10:45-ին:

գ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 12 180 933 (տասներկու միլիոն մեկ հարյուր ութսուն հազար ինը հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ:

դ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<ԲԱՋԱԼՏՇԻՆ>> ԱԿ	Գեղարքունիքի մարզ, գ.Գեղարքունիք	9 450 000	1 908 000	11 448 000
2	<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ	ք. Երևան, Նուբարաշեն 11 փ. 21 շ. 16 բն.	9 642 000	1 928 400	11 570 400

ե) Ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է 11.11.2019թ. նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

զ) Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 12.11.2019թ. նիստի ընթացքում պարզվել է, որ

1) <<ԲԱՋԱԼՏՇԻՆ>> ԱԿ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը (այդ թվում գնային առաջարկի հավելվածը) հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև գնային առաջարկի հավելվածում առկա է անճշտություն (3-րդ և 4-րդ սյունակների արժեքների հանրագումարը չի համընկնում 5-րդ սյունակի արժեքին):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է <<ԲԱՋԱԼՏՇԻՆ>> ԱԿ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

2) <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

1.2 Հաշվի առնելով, որ ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/41 ծածկագրով գնման գործընթացը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել 12.11.2019թ. նիստը և ծանուցել հրավերի պահանջներին բավարարող գնահատված մասնակցին՝ <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ին առաջարկված գնի նվազեցման նպատակով (14.11.2019թ. ժամը 12:30-ին ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ հասցեում) կայանալիք բանակցությունների մասին, որին վերջինս չի ներկայացել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/41 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղն զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա. Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ	բավարար
-	<<ԲԱՋԱԼՏՇԻՆ>> ԱԿ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղն զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշում է.

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

բ) Ծանուցել 1-ին տեղն զբաղեցրած մասնակցին՝ <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ին, ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/41 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Գ. Գևորգյան

---------- Ռ. Ադամյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան